Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2023 թվականի հունվարի 28-ի N28 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 5-ի N1-Ա – N3-Ա, 2023 թվականի հունվարի 12-ի N4-Ա և N5-Ա, որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N1-Ա որոշմամբ տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին։
2. N3-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել օրենսդրական իրավական ակտի հոդվածի կամ մասի, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր։
3. N1-Ա - N5-Ա որոշումներում չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ